ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴՈՒ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Ալավերդի, (0253) 2-41-00, alaverdi.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

07 ՀՈՒԼԻՍԻ 2020 թվականի N 195-Ա

ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏ ԳՈՒՄԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ մասով, 17-րդ հոդվածի դրույթներով ***որոշում եմ՝***

Գումարել Ալավերդի համայնքի ավագանու արտահերթ նիստ՝ 2020 թվականի հուլիսի 09-ին, ժամը 16.00-ին, համայնքապետարանի վարչական շենքում՝ հետևյալ օրակարգով.

1. Ալավերդի համայնքի ավագանու 2020 թվականի հուլիսի 09-ի արտահերթ նիստի օրակարգը հաստատելու մասին:
(Զեկ.Ս. Խեչումյան)
2. Ալավերդի համայնքի 2020 թվականի բյուջեի մեջ փոփոխություններ կատարելու մասին:
(Զեկ. Ս.Խեչումյան)
3. Համայնքի ղեկավարի հաղորդումն Ալավերդի համայնքի 2020 թվականի բյուջեի երկրորդ եռամսյակի եկամուտների և ծախսերի կատարման մասին:
(Զեկ.Ս. Խեչումյան)
4. Ալավերդի համայնքի հողային հաշվեկշիռը հաստատելու մասին:
(Զեկ. Ս.Խեչումյան)

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՍԱՍՈՒՆ ԽԵՉՈՒՄՅԱՆ**

2020թ. հուլիսի 07
ք. Ալավերդի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴՈՒ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Ալավերդի, (0253) 2-41-00, alaverdi.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

06 ՀՈՒԼԻՍԻ 2020 թվականի N 194-Ա

06-002-0063-0008 ԾԱԾԿԱԳՐԻ ՄԵՋ ԳՏՆՎՈՂ, 0.12 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՏՆԱՄԵՐՁ ՀՈՂԱՄԱՍԻ ՀՈՂՀԱՏԿԱՑՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ, ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆԸ, ԲԱՑ ՊԱՏՇԳԱՄԲԸ, ԱՆԱՍՆԱԳՈՄԸ, ՊԱՐԻՍՊԸ ԵՎ ԱՎԵԼ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ 0.02369 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՍԱՀՄԱՆԱՁԱՏՎԱԾ ՀՈՂԱՄԱՍՆ ՕՐԵՆՔԻ ՈՒԺՈՎ ՍԵՓԱԿԱՆ ՀԱՄԱՐԵԼՈՒ, ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ, ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 10.03.2020Թ N 78-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ, 43-րդ հոդվածներով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 2-րդ կետի 4-րդ մասով, «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության 50-Ն օրենքի 2-րդ և 3-րդ, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշումով և հաշվի առնելով, որ բնակելի տունը, բաց պատշգամբը, անասնագոմը, պարիսպը չեն խախտում այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը, չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ, պահպանում են քաղաքաշինական նորմերը, հիմք ընդունելով Սեյրան Վաղարշակի Սիմոնյանի լիազորված անձ Սուսաննա Վաղարշակի Երիցյանի դիմումը, անձնագրերի պատճենները, լիազորագիրը, ժառանգության իրավունքի վկայագիրը, «ԱԿԱ-ԳՐԱՆԻՏ» ՍՊԸ-ի կողմից տրված հողամասի և շինության հատակագծերը, «Թիվ 2 ԲՇՏ» ՓԲԸ-ի կողմից տրված 07.02.2020թ. թիվ 0-40 տեղեկանքը, հողային բարեփոխումների և սեփականաշնորհման տեղական հանձնաժողովի 01.12.1993թ. 20/9 որոշման քաղվածքը, քաղաքաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի առաջարկությունը ***որոշում եմ***՝

1. Ալավերդի քաղաքի Սանահին թաղամասի հյուսիսային մասում գտնվող բնակելի տանը տրամադրել համայնք Ալավերդի, քաղաք Ալավերդի, Սանահին թաղամաս, Միկոյան փողոց, N 2 փոստային հասցե:

2. Վերականգնել Սեյրան Վաղարշակի Սիմոնյանին, Գրետա Մաքսիմի Սիմոնյանին ժառանգության իրավունքով պատկանող՝ համայնք Ալավերդի, քաղաք Ալավերդի, Սանահին թաղամաս, Միկոյան փողոց, N 2 հասցեում գտնվող, 0.12 հա մակերեսով տնամերձ հողամասի հողհատկացման հիմքերը, համասեփականության իրավունքը:
3. Համայնք Ալավերդի, քաղաք Ալավերդի, Սանահին թաղամաս, Միկոյան փողոց, N 2 հասցեում գտնվող (ծածկագիր՝ 06-002-0063-0008), 1969 թվականին կառուցված բնակելի տունը, բաց պատշգամբը, անասնագոմը, պարիսպը, ինչպես նաև կառուցման և սպասարկման համար զբաղեցրած 0.12 հա մակերեսով բնակելի կառուցապատման հողամասից սահմանազատված, ավել օգտագործվող 0.02369 հա մակերեսով հողամասը Հայաստանի Հանրապետության 50-Ն օրենքի ուժով համարել Սեյրան Վաղարշակի Սիմոնյանի (ծնված՝ 09.12.1957թ.) և Գրետա Մաքսիմի Սիմոնյանի (ծնված՝ 05.04.1966թ.) համասեփականությունը:
4. Անշարժ գույքի զբաղեցրած հողամասն ընդգրկված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում:
5. Հողամասի սահմանները որոշվում են համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով:
6. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
7. Ուժը կորցրած ճանաչել Ալավերդի համայնքի ղեկավարի 10.03.2020թ. «06-002-0063-0008 ծածկագրի մեջ գտնվող, 0.12 հա մակերեսով տնամերձ հողամասի հողհատկացման հիմքերը վերականգնելու, բնակելի տունը, բաց պատշգամբը, անասնագոմը, պարիսպը և ավել՝ օգտագործվող 0.02369 հա մակերեսով սահմանազատված հողամասն օրենքի ուժով սեփական համարելու, փոստային հասցե տրամադրելու մասին» N 78-Ա որոշումը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՍԱՍՈՒՆ ԽԵՉՈՒՄՅԱՆ**

2020թ. հուլիսի 06
ք. Ալավերդի